XIX դ. վերջերին, դեռևս թարմ պատմական դեպքերի հետ կապված վավերագրերի ու հուշերի հիման վրա արված ուսումնասիրությունները թույլ են տալիս պատկերացում կազմել այդ տարածաշրջանի հայոց նկարագրի հետ կապված փոփոխությունների ու դրանց պատճառ դարձած աշխարհաքաղաքական իրադարձությունների մասին: XVIII դ. առաջին քառորդին Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Զալալյանը պարզել է, որ միայն թուրք-պարսկական պատերազմների, լեզգիների իրար հաջորդող ասպատակությունների ու դրանց հետևած սովի արդյունքում Շաքի-Շիրվան տարածաշրջանում իսլամ են ընդունել ավելի քան տասը հազար հայեր¹:

Ընդ որում՝ դավանափոխության հետ միասին, թեև աստիճանաբար տեղի է ունենում նաև մայրենի լեզվի կորուստ, այնուամենայնիվ, դա չի ենթադրում տնտեսամշակութային գործունեության համակարգի փոփոխություն:

Եսայի կաթողիկոսն իր ժամանակին Շիրվանի մասին գրել էր «**և երկիրն էր բարեկի և շէն և մարդաշատ, թե հայ ազգօք, որ ի Ղարաբաղի երկրէն ժողովորդք յոյովք անցեալ էին յերկիրն այս ավելի քան տեղականսն. և թէ այլ ազգօք որ բնիկ ի յերկրէն են**»²: Հաջորդ հարյուրամյակում այդ նույն նկարագիրը գրի են առել Տեր Բաղդասար Գասպարյանը, Մակար Բարխուդարեանցը³ Տեղեկացնում է նաև, որ այդ տարածքներում վերաբնակվել են նաև Իրանի հայաշատ վայրերից ներգաղթած հայերը (Նոր Ջուղայի մերձակա **Փերիա գավառից, Սպահանից, Թեհրանից, Խոյ-Սալմաստից, ինչպես նաև՝ Նախիջևանի ու Գողթան գավառներից**):⁴

Դերբենտի ու Ղուբայի գորգագործական կենտրոններում խոսքն առաջին հերթին վերաբերում է «**Ջրաբերդ**» հորինվածքի տարբերակներով գեղազարդված գորգերին (այդ թվում՝ այսպես կոչված «**Ջեյխուր**» տիպին), «**Գետաշեն**», «**Որոտան**», և «**Ամարաս**» տիպի գորգերին, Շիրվանի ու Շաքիի տարածաշրջանների գորգագործական կենտրոններում՝ «**Ճարտար**», «**Հաղպատ**», «**Տավուշ**», «**Ուտիք**», «**Ոսկանապատ**», «**Բանանից**», «**Փյունիկ**», «**Սիսական**», «**Գանձակ**» և մի քանի այլ տիպեր: Այսրկովկասի հյուսիսարևելյան գորգագործական կենտրոններում լայն տարածում ունեն «**Աղբակ**» տիպը (մասնագիտական գրականության մեջ հայտնի են «**Ավշան**» անունով), «**Մինա խանում**» տիպը, որը բնորոշ էր Ուրմիա լճի ավազանի ու Վասպուրականի արևելյան գավառների գորգագործական կենտրոնների ավանդույթներին: Մեր ասածների հետ համահունչ են հատկապես Մ. Իսանի դիտարկումները Կարամարյանի շրջանի գորգերի մասին, որոնք հայտնի էին «**Էրմենի խիլա**» անունով: Իսանը գրում է նաև, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո գորգագործությունը այդ ենթաշրջանում համարյա վերացել է:⁵

Բնականաբար, այսրկովկասյան գորգագործական ավանդույթների ձևավորման հարցում իրենց ուրույն դերն են խաղացել նաև տարածաշրջանի

բնիկ այն էթնիկական հանրույթները, որոնք այս կամ այն չափով զբաղվում էին գորգագործությամբ (լեզգիներ, ավարներ, կումիկներ, շահդադյան խմբի էթնիկական տարրեր՝ խինալուդ-ցիներ, բուդուդներ, կրըզներ և այլն): Որակյալ գորգեր գործելու առումով աչքի էին ընկնում թաթերը: **Թաթաբնակ բնակավայրերին են բնորոշ «Չիչի», «Փիրեբեդի», «Ղոնաղ-քենդ», «Սուրխախի»** և շուկայական բարձր արժեք ունեցող մի շարք այլ տիպերի պատկանող գորգեր, որոնց արտադրությունը ծավալվեց հատկապես 1880-ական թվականներից:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ Այսրկովկասի գորգագործական կենտրոններին վերաբերող ավանդույթների ձևավորման հարցում, չնայած պատմական Հայաստանի ու Իրանի այլ գորգագործական կենտրոնների ազդեցություններին, այնուամենայնիվ, առանցքային դերակատարում են ունեցել Արցախից ու Սյունիքից դարեր շարունակ այդտեղ վերաբնակություն հաստատած հայերն ու տեղի բնիկ ժողովուրդները՝ մասնավորապես լեզգիներն ու թաթերը:

Ashkhunj Poghosyan, Tatevik Muradyan (Armenia)

“Cultural Values Expertise Centre”, Ministry of Culture of RA, People’s Art Center after Hovhannes Sharambeyan

TRADITIONS OF ARMENIAN RUG WEAVING CULTURE IN NORTH-EASTERN CAUCASUS

In several traditional centers of rug weaving culture (Shirvan, Derbent, Gharadagh, Lake UrmiaBasin, Asia Minor) there were such technological features and ornamentation principles which to some extent are related to Armenian historical and cultural traditions. The current issue of the topic is concerned with the fact that very few researchers consider the participation of Armenians in the origin of these features.

In order to clarify this issue, along with other factors, the situation of historical demography of the above said areas should be taken into consideration along with the fact that the Armenian community has been obviously proficient in rug weaving technologies and that the Armenian Highland is one of the rug weaving centers.

In this report we shall make an attempt to focus on the areas of north-eastern Caucasus, which are distinguished by developed rug weaving culture and especially by multifarious rug types as well as rug weaving technologies.

Having used the data of available written as well as historical and ethnographical sources, the historical demographic description of the area is presented. According to this Armenian communities played a significant role in various fields. It is worth mentioning that these processes have been clearly observed since the 5-6th centuries. Noticeable is the fact that the number of Armenians was so substantial that a separate Armenian kingdom was established. Irrespective of regularly repeated abrupt changes of the military and political situations in the area, semi-independent Armenian dominions continued to exist in the north-eastern regions of Caucasus in the 16-17th centuries, particularly,

¹ **Եսայի Հասան Զալալյան**, Պատմություն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելեց յաշխարհին Ադրանից, Շուշի, 1839, էջ 29 /հետայսու՝ Եսայի Հասան Զալալյան/, ինչպես նաև՝ **В. Н. Левингов** նշվ. աշխ., էջ 92:

² **Եսայի Հասան Զալալյան**, էջ 32-33:

³ **Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի**, Ծաղկաբաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Հ. Քյուրոյան. – Բանբեր Մատենադարանի 9, Եր., 1969, էջ 293:

⁴ Նույնը, էջ 91-94, 117, 120-121, 150:

⁵ **М. Исаев**, Ковровое производство Закавказья, Тифлис, 1932, с. 121.

the Principality of Kutkashen. Artem Araratyan eyewitnesses to the dozens of flourishing Armenian villages located in the Mushkyur Valley at the end of the 18th century.

Studies based on documents and memoirs help to link historical events at the end of the 19th century, and have an idea about the changes reflecting the Armenian demographic situation in the area and the geographical and political events which caused them. In the first quarter of the 18th century the Catholicos of Gandzasar Yesayi Hasan Djalalyan found out that only during the Turkish-Persian wars, continuous invasions of Lezgians and famine of the people brought to the adoption of Islam in the Shaqi-Shirvan area, of more than 10 000 Armenians.

Although religious conversion gradually brings to the loss of mother tongue, however, it does not imply changes in economic and cultural activities.

In his time the Catholicos Yesayi wrote about Shirvan: “the land is fertile, prosperous and full of people; this refers to Armenians who have come from Karabakh and are more in number than the natives as well as other nations who live here”. During the next one hundred years the same situation was recorded by Reverend Baghdassar Gasparyan, Makar Barkhutareants. He also informs that Armenians, having emigrated from Armenian settlements in Iran (county of Peria, adjacent to Nor Djughha, Isfahan, Tehran, Khoy-Salmast as well as from Nakhidjevan and Goghtan counties) resettle in these areas.

In rug weaving centers Derbent and Ghuba, first of all the rugs with the varieties of “Djraber” design are taken into consideration (also the type “Zeikhur”) and rug types: “Getashen”, “Vorotan”, “Amaras”. To the rug weaving centers of Shirvan and Shaqi, such rugs as “Tschartar”, “Haghpat”, “Tavush”, “Utik”, Voskanapat, “Banants”, “Phoenix”, “Sisakan”, “Gandzak” and some others are typical. The rug type “Aghbak” (known as “Avshan” in professional literature) was widely spread in the north-eastern rug weaving centers of Caucasus; the rug “Mina Khanum” was typical to the traditions of the eastern counties of Lake Urmia Basin and Vaspurakan. The above said is first of all concordant with observations of M. Isaev on rugs of Karamaryan region, known by name of “Ermeni Khila”. Isaev also asserts that after the World War II, rug weaving has almost perished in this sub-region.

Certainly, those native ethnic communities of the area, which were engaged in rug weaving to a certain extent (Lezgians, Avars, Kumiks, ethnic elements of Shahdagh group: Khinalugh, Budugh, Krizes, etc.) played their distinctive role in the formation of the rug weaving traditions of Northern Caucasus. Tats were distinguished in terms of high quality rugs. “Chichi”, “Pirebedyl”, “Ghonaghkend”, “Surakhan” and other rugs of high marketing value, attributed to several other types, the production of which expanded particularly from the 1880s, are characteristic of these settlements of Tats.

Summarizing we can state that apart from influences of other rug weaving centers of historical Armenia and Iran on the formation of traditions of rug weaving centers of Northern Caucasus, Armenians from Artsakh and Syunik who have resettled in these areas for centuries and native peoples, in particular, Lezgians and Tats played a key role in this process.

Սվետլանա Պողոսյան (Հայաստան)

(Մարդարասյարի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարան)

ԳԻՄԱՆԿԱՐԱՅԻՆ ԳՈՐԳԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ (ՀԱՅՈՑ

ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՀԻՄՆԱԲ)

XX դարասկզբին հայկական տնայնագործական գորգարվեստում որպես զարդամոտիվներ գրեթե նույնությամբ վերարտադրվում էին ժողովրդական ավանդական զարդահորինվածքները: Խորհրդային տարիներին գորգի վարպետների ու նկարիչների ջանքերով հայկական գորգագործության մեջ զարգանում է դիմանկարային գորգարվեստը: Հայկական դիմապատկերային գորգերում կենտրոնական զարդանախշի՝ արևի կամ այլ հիմնային խորհրդանիշի փոխարեն հայտնվում է խորհրդային ժամանակաշրջանի խորհրդանիշը՝ առավելապես առաջնորդի դիմապատկերը: Առաջնորդի կերպարը տեղադրվում է գորգի կենտրոնում, որտեղ որպես կանոն ներկայացվում էր արևի նշանը: Արևի պաշտամունքը շարունակում է մնալ գերակայող՝ ձեռք բերելով նոր դրսևորումներ: Կենդանի մարդկանց՝ Լենինին, Ստալինին աստվածացնելով՝ նրանց վերագրվում են առասպելական բնույթ, անմահություն և դրանով կերպարները նույնացվում են արևի հետ:

Գորգի դիմանկարիչներ Գ. Գարանֆիլյանը («Կար Մարքս», «Միլոտով»), Հ. Քեշիշյանը («Ստալին», «Օրջոնիկիձե», «Բանվորը»), Մ. Մաքսականյանը («Գեղարվեստական» «Աղբյուրի մոտ», «Աշխատանքային տեսարաններ»), Հ. Թաքաչյանը («Լենին», «Մառ Ցգե Դուն»), Բ. Ուզունյանը («Ստալին», «Բաղրամյան», «Միկոյան»), Գ. Հարությունյանը («Մ. Պապյան և Վ. Միլոտով»), Ս. և Ն. Լուսարարյանները («Ստալին»), Գ. Վարդանյանը («ՀՍՍՀ գերբը») և այլոք իրենց ստեղծագործություններով զարգացրին դիմանկարային գորգարվեստը՝ օգտագործելով նաև հայկական գորգագործության ավանդույթները: Դիմապատկերային գորգերում ներկայացվել են աշխատավորների ստեղծագործական կյանքը, երկրի ինդուստրացումը, մշակութային առաջընթացը: Հաճախ պատկերվել են նոր կերպարներ (քաղաքական առաջնորդներ, կուսակցական, այդ թվում և հայագրի, գործիչներ, պիոներ, բանվոր, կոլտնտեսուհի, կոլտնտեսական, տրակտորիստ և այլն) և աշխատանքային նոր գործիքներ (մեքենայի շարժիչ, տրակտորի անիվ) և այլ մոտիվներ: Հայաստանի զինանշանը պատկերող գորգի վրա գործված են Մասիսները՝ ազգային ինքնության խորհրդանիշը, դրանցից վերև՝ արևը (որպես արխայիկ զարդանախ) և խորհրդային մուրճն ու մանգաղը: Գորգերը զարդարված են բուսական, կենդանական և այլ մոտիվներով, որոնք բովանդակային կապ ունեն ներկայացվող կերպարների սոցիալական կարգավիճակի հետ: Իլլիչի դիմանկարը ծաղկեպսակ շրջանակի մեջ է՝ օղակված սև ժապավենով, իսկ շրջագոտին զարդարված է կաղնու տերևներով: Ռազմական գործիչներ կերպարացնող գորգի շրջագոտու վրա պատկերված է զինվորի, ինքնաթիռի, պարաշյուտի և այլ մոտիվներ՝ որպես Կարմիր բանակի և հայրենիքի պաշտպանության խորհրդանիշներ: Խորհրդային Հայաստանի 30-ամյակին նվիրված գորգի զարդանկարային հորինվածքում խաղողի, բամբակի, ցորենի, նոսն, նուշի հատկանշական մոտիվների կողքին պատկերվել են հայկական մանրանկարչությունից ժառանգված կենդանական և թռչնային զարդամոտիվներ:

Խորհրդահայ գորգարվեստի վարպետները դիմանկարային ժանրում կարողացել են ավանդականի և նորությանի ներդաշն համադրությամբ հասնել խորը ընդհանրացումների և սոցիալիզմի սկզբունքներով մարդկային կերպարի տիպական բնութագրման:

Svetlana Poghosyan (Armenia)

(Memorial Complex of Sardarapat Battle, Museum of Armenian Ethnography)

CHARACTERISTICS OF PORTRAIT RUGS (BASED ON THE COLLECTION OF THE MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY)

At the beginning of the 20th century traditional folk ornaments, as motifs, were almost identically reproduced in home-based rug weaving art. With the efforts of rug weavers and painters, next to renowned illustration rugs, such as “Mother Armenia”, “Eagle rug”, Soviet portrait rug art began to develop. In these rugs, instead of the central pattern (the sun or other symbol), appears the symbol of the Soviet period: the portrait of a leader. Portrait of the leader was placed in the center of the rug, where, as a rule, formerly was the sun. The sun cult continued to be dominant, obtaining new manifestations. Making divine living people, e.g. Lenin, Stalin, they were attributed mythological features, immortality, thus being identified with the sun.

At that period, images, representing ancient concepts as well as ancient symbols were replaced by Soviet symbols, bearing the same ideas. The red star was one of the most significant symbols of the Soviet period usually accompanied with hammer and sickle. It was believed to be the symbol of solidarity of world proletariat of the five continents, whereas the red color was the color of proletariat revolution. It is the cult aspect of the Soviet symbol. The contours of the sign feature an ancient symbols which were shortly replaced by hammer and sickle, thus becoming symbols of unanimity and solidarity of workers and peasants.

Rug portrait painters D. Garanfilyan (“K. Marx”, “Molotov”); H. Qeshishyan (“Stalin”, “Ordjonikidze”, “The Worker”); M. Mnatsakanyan (“Artistic”, “At the Water Spring”, “Work Scenes”); H. Tabaqyan (“Lenin”, “Mao Tsze Dun”); B. Uzunyan (“Stalin”, “Baghramyan”, “Mikoyan”); G. Harutyunyan (“M. Papyan and V. Molotov”); S. and N. Lusaryans (“Stalin”); G. Vardanyan (“Coat of Arms of ASSR”) and others enriched the portrait rug art, employing also the traditions of Armenian rug weaving. Portrait rugs featured the creative life of workers, new life phenomena: industrialization, cultural advances and the like. Often new images were depicted (political leaders, party activists, among them Armenians, pioneers, workers, tractor drivers, collective farm male and female members), new tools (car motors, wheel of a tractor), etc. On the rug featuring the Armenian Coat of Arms, the big and small Masis mountains, the symbol of national identity, are woven. Above them is the sun as an archaic motif and the Soviet symbols: hammer and sickle. The rugs are decorated with floral, animal and other motifs which have different links with the social status of the featured figures. Lenin’s portrait is in a flower wreath, framed in a black belt and circled with oak leaves. On a rug belt featuring a military man, motifs of soldiers, planes, parachutes, etc.

are depicted as symbols of the Red Army and defense of the motherland. In the layout design of the rug dedicated to the 30th anniversary of the Soviet Armenia, next to the characteristic motifs of cotton, grapes, wheat, pomegranate, almonds, animal and bird ornamentation motifs, inherited from the Armenian miniature art, are depicted.

In the portrait genre, masters of Soviet Armenian rug weaving art have succeeded to reach deep generality and typical characterization of man’s image according to the principles of socialistic realism by combining traditional and new symbols.

Անի Սամսոնյան (Հայաստան) («Հայնյուզ» մամուլի ակումբ)

ԱՌՌԲԵՋԱՆԻ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՔԱՐՈՋՁՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական պատմական նահանգների՝ Ադվանքի և Շիրվանի տարածքում 1918 թ. մահմեդական տարբեր էթնիկ խմբերից, կամ ինչպես հայտնի է՝ կովկասյան թաթարներից կազմավորված Ադրբեջանական Հանրապետությունն իր գոյության սկզբնակետից մինչև միասնական պետության ձևավորումն ու ամրապնդումը փորձել է աշխարհին ճանաչելի դառնալ որպես հին էթնոս՝ ընդհանուր կենսաբանական ծագմամբ, պատմական ճակատագրով, տարածքով և պետականությամբ: Ժխտելով սեփական էթնոգենեզի կարճ ժամանակահատվածը և պատմամշակութային ժառանգության բացակայությունը՝ ադրբեջանցիներն իրենց էթնիկական «ես Կոնցեպցիան» ձևավորում են հարևան ազգերի պատմաաշխարհագրական և հոգևոր-մշակութային իրողության հիմքերով: Էթնիկական «ես-կոնցեպցիան» պահպանվում է ա/ էթնոսի անդամների հոգեկան և հոգևոր աշխարհում, բ/ մշակութային հուշարձաններում: ԵԲՎ առաջին, ևԲ երկրորդ դեպքերում վերոնշյալներից ազգային ինքնագիտակցությունը դուրս մղել հնարավոր չէ: Այդ իսկ պատճառով պարզապես յուրացվում են նյութական այն արժեքները, որոնք տվյալ ազգի համար կարող են համարվել նաև ազգային-մշակութային խորհրդանիշ: Այս տեսանկյունից ադրբեջանական միջէթնիկական ազդեցիկության և թշնամական մրցակցության նշանակետը հայկական պատմամշակութային ժառանգությունն է: Ըստ այդմ էթնիկական ինքնագիտակցությունն անհատական և խմբային մակարդակով ձևավորելու համար Ադրբեջանում կիրառում են բոլոր ժամանակների վտանգավոր, բայց արդյունավետ գործիքը՝ քարոզչությունը: Հատկապես տեղեկատվական հարթակներում ադրբեջանական քարոզչամեթոդնան գործարդում է արտաքին և ներքին լսարանին ապակողմնորոշելու և ուղղորդելու բոլոր հնարավոր մեխանիզմները: Ադրբեջանում քարոզչությունը՝

- դիտարկվում է համապարտադիր գործունեություն և ազգային անվտանգության խնդիր.
- ներառում է հասարակական գործունեության բոլոր ոլորտները.
- դառնում է լրատվամիջոցների գործունեության գերնպատակը (հիմնականում զբաղվում են հեռուստաընկերությունները, որոնց 90 տոկոսը հեռարձակվում է ադրբեջաներենով).
- համազգային նպատակ է, որն իրականացվում է պետական և ոչ պետական մակարդակներով.
- ուղղված է ադրբեջանական էթնոսի ինքնորոշման ձևավորմանը.
- վերաճել է տեղեկատվական պատերազմի՝ ընդդեմ ՀՀ-ի և աշխարհի ողջ հայության (Սփյուռքի).
- միջազգային հարթակներում ինքնադրսևորվելու և հանրության վստահությունը շահելու միջոց է.

Վերջին տարիներին ադրբեջանական քարոզչական հարձակման թիրախ է դարձել հայ ժողովրդական կիրառական արվեստը՝ մասնավորապես գորգագործությունը: Բացարձակապես ժխտելով անդրկովկասյան

տարածաշրջանում գորգարվեստի ծագման և զարգացման հայկական արմատները՝ ադրբեջանցիները հորինված «փաստերի» և իրականության խեղաթյուրման միջոցով աշխարհին փորձում են համոզել, որ կովկասյան գորգերի հայրենիքը Ադրբեջանն է, իսկ զարդանախշային սիմվոլիկայի նախահայրը՝ ադրբեջանցին: Այդ նպատակով ստեղծվեցին «թուրքական գորգ» և «ադրբեջանական գորգ» հասկացությունները: Ադրբեջանի Լ. Քերիմովի անվան գորգի և ժողովրդական-կիրառական արվեստի պետական թանգարանի տնօրեն Ռոյա Թաղիևայի համոզմամբ դրան նպաստեց 2005թ-ին «Գորգի պահպանման և զարգացման մասին» օրենքի ընդունումը: «Մեզ համար կարևոր է, որ ադրբեջանական գորգ հասկացությունն ընդունվի» – նշում է Թաղիևան: Ադրբեջանցի մշակութաբանն այստեղ ճիշտ եզրույթ է օգտագործում՝ ընդունվել. սովորաբար ընդունվում են միայն նորածին հասկացությունները: Համացանց, սոցալի միջոցներ, տեսաձայնաշարեր, թանգարան-ներ, հանրապետական և միջազգային գիտաժողովներ, ինչպես նաև նվիրատվություններ՝ այսպես է Ադրբեջանն աշխարհին ապացուցում նաև հայկական գորգի ադրբեջանական ծագումը:

Ani Samsonyan (Armenia) (“Haynews” Press Club)

ON PROPAGANDA TECHNIQUES OF AZERBAIJANI RUG WEAVING CULTURE

The Republic of Azerbaijan, formed in 1918 on the territory of historical Armenian provinces Aghvanq and Shirvan, from different Muslim ethnic groups or as is known, from Caucasian Tatars, since the very beginning of its existence up to the formation of an entire, firm state, has been trying to be acknowledged by the world as an ancient ethnos with a common biological origin, historical fate, territory and statehood. The Azerbaijanis, rejecting the short period of time of their own ethnogenesis and the absence of historical and cultural heritage, try to form their ethnic “I-conception” on the basis of their neighboring nations’ historical and geographical as well as spiritual and cultural realities. Ethnic “I-conception” survives in: a) psychological and spiritual world of the ethnos, b) cultural monuments. In both cases it is impossible to drive out the national self-consciousness out of them. Therefore, they simply tend to assimilate those material values which can be considered national and cultural symbols for a given nation. From this perspective, the target of Azerbaijani inter-ethnic aggression and rivalry is the Armenian historical-cultural heritage. In order to form their ethnic self-consciousness on individual and group level, a dangerous but effective means of all times – propaganda is used. The Azerbaijani propaganda machine utilizes all possible means especially on informational levels to disorient and direct inner and outer audience.

Azerbaijani propaganda:

- is considered as an issue of compulsory activity and national security
- includes all spheres of public activities
- becomes the main goal of mass media activities (mainly TV channels are in charge, the 90% of which is in the Azerbaijani language)

- is an all-national objective, fulfilled on state and non-state levels
- is aimed at formation of self-determination of Azerbaijani ethnos
- has grown into informational war against Armenia and all Armenians in the world (Diaspora)
- is a means of self-expression and public confidence on international stages

For the recent years, Armenian folk applied art, in particular, rug weaving art has become the target of the Azerbaijani propaganda attacks. Drastically denying the Armenian roots of rug weaving art in the Transcaucasia area, Azerbaijanis, by means of fictitious “facts” and distorted reality, try to convince the world that the motherland of Caucasian rugs is Azerbaijan and Azerbaijanis are the ancestors of rug design symbolism. For this purpose the concepts “Turkish rug” and “Azerbaijani rug” were created. R. Taghieva, director of the State Museum of Rug and Folk-Applied Art after L. Qerimov, believes that this was favored by the law on the “Preservation and development of rugs”, passed in 2005. She states: “It is important for us that the concept ‘Azerbaijani rug’ to be accepted”. The Azerbaijani culture expert uses the right term here ‘to accept’ for only newly born concepts are being accepted. Internet, publications, audio and video series, museums, republican and international conferences as well as donations – these are means Azerbaijan is using to prove the Azerbaijani origin of Armenian rugs to the world.

Ամայյա Սարգսյան (Հայաստան)

(Հովհ. Շարամբեյանի անվ. ժողովրդական սրեղծագործության կենտրոն)

ԳՈՐԳԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑ ԱՂԵՐՄՆԵՐԸ ՓԱՅՏԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՓՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1. Արվեստաբանական ու ազգագրական ուսումնասիրությունները վկայում են, որ գորգարվեստը սերտ աղերսներ է ունեցել քարի ու մետաղի գեղարվեստական մշակման, խեցեգործության, ասեղնագործության, ինչպես նաև փայտի գեղարվեստական փորագրության հետ՝ հորինվածքային ու ոճական առումներով, ընդ որում, ժողովրդական արվեստի այդ ճյուղերը, մշտապես փոխազդվելով, փոխադարձաբար հարստացրել են միմյանց:

2. Քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմանների հետևանքով բազմիցս խաթարվել է հայ ժողովրդի նյութական ու հոգևոր արժեքների ստեղծագործ առաջընթացը և, այնուամենայնիվ, հատկապես միջնադարից ու հետագա դարերից պահպանված և մեզ հասած գորգարվեստի և փայտի գեղարվեստական փորագրության նմուշները վկայում են հայ ժողովրդի դարավոր ձեռքբերումների ու հմտությունների մասին:

3. Զարդամոտիվը ժողովրդական արվեստի, այդ թվում նաև գորգի և փայտի գեղագարդման առավել ավանդական ու կայուն տարրերից է: Զարդանախշման տեխնոլոգիական և հորինվածքային փոփոխությունների արդյունքում զարդամոտիվները տարատեսակ ոճավորվելով գոյատևել են դարերդար, սերնդե-սերունդ:

4. Գորգապատկերներում, ինչպես նաև փայտե շինածոների գեղագարդման համակարգերում գերակշռել են միմյանց հետ զուգակցված բուսական, կենդանական և երկրաչափական զարդամոտիվները: Ջրի, պտղաբերության, բուսականության, արևի պաշտամունքի խորհուրդ պարունակող զարդամոտիվները, որպես հավերժության, արգասավորության և, ընդհանրապես, կյանքի խորհրդանիշներ, ժամանակի ընթացքում ամբողջովին կամ մասամբ ձևափոխվելով, վերաիմաստավորվելով, գրեթե կորցնելով նախնական խորհրդանիշածիսական իմաստը, ստացել են զուտ գեղագարդային (դեկորատիվ) նշանակություն:

5. Առանձնահատուկ է քառաթև խաչի մոտիվը. և՛ գորգապատկերներում, և՛ փայտե շինածոների զարդաքանդակներում դրան վերապահվել է չարը խափանելու, վանելու զորություն:

THE RUG PATTERNS AND THEIR AFFINITIES WITH DECORATIVE WOOD CARVING

1. Art and ethnographic studies testify that rug weaving art has had close relations with art work on stone and metal, ceramics, in needlework and woodwork in connection with patterns and style. Hence, these branches of folk art being constantly influenced by one another, have been mutually enriched.

2. Creative advances of Armenians material and spiritual values have been shattered many times because of political and economic unfavorable conditions. Nevertheless, the surviving samples of rugs and woodwork dating especially to the Medieval Ages and later bear witness to the millennia-old achievements and skills of the Armenian people.

3. Ornamentation motif is a more traditional and sustainable element of folk art both in rug and woodwork decoration. As a result of technological and design changes in ornamentation, ornamentation motifs were stylized and survived for millennia, passing from one generation to another.

4. In rug motifs as well as in ornamentation system of woodwork, interlaced floral, animal and geometrical patterns prevail. Patterns of water, fertility, sun cult symbols representing eternity, fecundity and symbols of life in general, having changed during a long period of time, and having almost lost their primary symbolic and ritual meaning, have obtained merely decorative significance.

5. Four-winged cross motif is unique in rug and woodwork ornamentation, which had a special power – to ward off evil spirits.

Հակոբ Միմոնյան (Հայաստան)

(ՀՀ Մշակույթի նախարարության պատրաստված մշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԻ ԶԱՐԴԱՆԱԽՇԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԳԱՐՎԵՍԻ ՎՐԱ

1. Նեոլիթյան «հեղափոխությունը» վաղ երկրագործական արտադրող տնտեսության ձևավորումը, պայմանավորեց մարդկային հասարակության նստակյաց կենցաղը, որը խարսխված էր անասնապահության, հացազգիների ու տեխնիկական բույսերի մշակման վրա: Թելատու կուլտուրաները՝ տեքստիլ արտադրության, իսկ մանր եղջերավոր անասունների բուծումը՝ բրդե հագուստների, այդ թվում նաև գորգագործության ծագման նախապայմաններն էին:

2. Ներսույթի զարդարման, հարմարավետության ու հարստության խորհրդանիշ գորգը կարող էր ծագել բրդե գործավածքի առաջացմանը զուգահեռ, այսինքն՝ բրդատու անասնապահության, մասնավորապես ոչ-խարաբուծության հարուստ ավանդներ ունեցող միջավայրում, թերևս նոր քարի դարի զարգացման փուլում՝ Ք.ա. VI հազարամյակի կեսին: Հայկական լեռնաշխարհում մինչ այժմ պահպանված ռելիկտային արտերն ու վայրի ոչխարների հոտերը վկայում են, որ Հայաստանն արտադրող տնտեսության, հետևաբար նաև գորգագործության նախահայրենիքներից էր:

3. Հանրահայտ է, որ գորգարվեստի հնագույն օրինակները մեզ չեն հասել և դրանց մասին մեր պատկերացումները խարսխված են ժամանակին դիմակայելու հատկություններով օժտված կարծր կրիչների՝ քարի, թրծակավի, ավելի ուշ՝ նաև մետաղի վրա նկարված, քանդակված կամ դրվագված զարդարվեստի վրա:

4. Վաղ բրոնզի դարում՝ Ք.ա. IV-III հազարամյակներում, Հայաստանում օրնամենտալիզմը բացառիկ լայն տարածում և նշանակություն է ստացել: Շենգավիթյան մշակույթի զարգացած փուլի խեցեղենի զարդանախշը բացառիկ կատարելության էր հասել: Այն իր ուղիղ անցումներով և մեանդրի, ճանկախաչի, պարույրի, սապատավոր թռչունների (ջայլամների) և այծերի պատկերագրությամբ մեծ նմանություն ունի գորգարվեստի զարդանախշի հետ:

5. Ուշագրավ է Շենգավիթի վերին՝ Ք.ա. XXVII-XXV դդ. թվագրվող շերտում հայտնաբերված գունազարդ քրեղանը: Կավանոթի ներսում պատկերված է շենգավիթյան մշակույթին բնորոշ կրակարան-օջախ (տան կամ սրբարանի, այսինքն՝ հարազատ միջավայրի խորհրդանիշ), որի սակրավ կենտրոնի շուրջը օձերի և արագիլների՝ չարի և բարու պայքարի թեման է: Սա, թերևս, հայկական մշակույթին բնորոշ գորգարվեստի՝ վիշապագորգի հետ առնչվող հնագույն զարդապատկերներից է: Համաշխարհային վիշապօձեր պատկերված են Թոեղքի և Ներքին Նավերի արքայական դամբարաններից հայտնաբերված գունազարդ ու սև փայլեցված սափորների վրա, որոնք թվագրվում են Ք.ա. III-II հազարամյակների սահմանագծով: Թերևս այս ժամանակաշրջանին են վերագրվում վիշապօձերի պատկերներով ժայռապատկերները և զուտ հայկական մշակույթին բնորոշ վիշապակոթողները: Համաշխարհային վիշապօձի և այծի պայքարի սխեմատիկ

գարդաբանդակ ուրվագծված է նաև Վերին Նավերի XV դամբարանի պաշտամունքային անոթի՝ կեռնուսի վրա: Հատկանշական է, որ շուրջ մեկ հազարամյակ (Ք.ա. XXIV–XIV դդ.) հարատևած վիշապօձի պատկերներով կավանոթները հայտնաբերվել են հնդեվրոպական ծեսով թաղված արքաների դամբարաններում:

6. Ընդունված տեսակետի համաձայն՝ միջին և ուշ բրոնզի դարի վերնախավի դամբարանարանների պատերը և հատակները գարդարված են եղել կենդանիների թանկարժեք մորթիներով ու գորգերով: Ներքին Նավերի արքայական դամբարաններում (Ք.ա. 2400–1800 թթ.) հայտնաբերվել են արջի, գայլի, հովազի և առյուծի մորթիների մացորդներ: Բացառիկ է Ք.ա. XIX–XVIII դդ. № 7 դամբարանի սափորներից մեկի հատակի տակ բացված գորգի կամ տեքստիլ գործվածքի դաջվածքը, որի վրա հստակ գատորոշվում է զիզգազ գարդանախշը կարմիր, դեղին, սև և սպիտակ նրբերանգների համադրությամբ (գույներ, որոնք բնորոշ են հայկական գորգարվեստին): Հենց այս դամբարանի ավելի քան 50 գունազարդ կավանոթներ հարդարված են ճոխ գարդապատկերներով, որոնցից շատերը բնորոշ են գորգարվեստին:

7. Ուշ բրոնզի դարով (Ք.ա. XV–XIV դդ.) են թվագրվում Լճաշենի սայլերը, որոնց թափքերի փորագրությունները՝ ճանկախաչեր, վագոզ գալարներ, մեանդրներ, նույնպես բնորոշ են գորգարվեստին:

8. Գորգարվեստի հետ սերտորեն առնչվում է նաև Հայաստանի վաղ երկաթի դարի՝ Ք.ա. XII–IX դդ. բրոնզե գոտիների պատկերագրությունը: Մրանց վրայի հեքիաթային հերոսների ու կենդանիների (միանդրյուրներ, ճանկերով ձիեր և այլն) դրվագրումները մեծ նմանություն ունեն պատկերազարդ գորգերի գարդանախշերին: Իսկ կենտրոնական պատկերները եզրագոտիներով ամփոփելու ավանդույթը համատարած է նաև գորգարվեստում:

9. Ընդհանրացնելով, կարող ենք նշել, որ Հայաստանի՝ վաղ, միջին և ուշ բրոնզի, ինչպես նաև վաղ երկաթի դարերի գարդանախշերի աղերսները գորգարվեստում չէին կարող պատահական լինել: Տրամաբանական է ենթադրել, որ հնագույն մշակույթների կիրառական արվեստի բնորոշ գարդանները սերնդից սերունդ փոխանցվելով, արձանագրվել են կենցաղում լայնորեն տարածված, առավել կայուն և ավանդապաշտ բնագավառում՝ գորգարվեստում:

Hakob Simonyan (Armenia)

(Research Center of Cultural and Historical Heritage, Ministry of Culture of RA)

THE INFLUENCE OF THE ARMENIAN BRONZE AGE ART DESIGN ON RUG MAKING ART

1. Neolithic “revolution” – the formation of the agricultural producing economy, predetermined a settled mode of life, which was based on cattle-breeding, grain-growing and technical plant cultivation. Thread-giving plants were for textile production, while sheep and goats were for woolen clothes, and at the same time preconditioned the birth of carpet making.

2. With the development of the interior, the carpet, which symbolized wealth and comfort, could have appeared alongside with the woolen cloth, specifically, in an environment rich in traditions of wool-producing animals breeding, i.e. sheep-breeding, possibly in the high stage of the Neolithic period, in the middle of the VI millennium BC. The relic fields and the wild sheep pasturing there prove the fact that Armenia had a producing economy, and consequently was the home of carpet making.

3. It is well-known, that the oldest samples of carpets have not reached us, and our idea of them is anchored on the images carved or cut on stable, time-proofed materials, i.e. stone, raw and burnished clay, and later on metal.

4. In the Early Bronze Age, the IV–III millenniums BC the ornamentation in Armenia gained great popularity and significance. The ornaments on the pottery of the high stage of Shengavitian culture reached exquisite perfection. With its straight transitions, meanders, claw-like crosses, spirals, humped birds (ostriches) and goat images it has similarities to ornaments to carpets-making.

5. The clay bowl found in the upper layer (XXVII–XXV cc BC) at Shengavit is worth of special notice. Inside the bowl is represented a typical to Shengavitian culture hearth (a symbol of home or shrine, that is warm, tranquil environment); around its sacred center there were snakes and storks pictured presenting the everlasting struggle of the evil and the good. This, perhaps, is one of the oldest and most typical ornament peculiar to Armenian culture and carpet-making art. The images of the world snake are portrayed on the black polished and painted pottery found in the royal graves at Trialety and Nerkin Naver, dating to the III–II millennium BC. Apparently the cave drawings with the images of dragon-snakes, and the dragon monuments peculiar purely to the Armenian culture are dated to this period. The schematic decoration representing the struggle of the world snake and the goat looms out on the cult vessel (kernos) from grave XV in Nerkin Naver. It should be noted that vessels portraying the dragon-snake (that lasted for about one millennium (XXIV–XIV cc BC)) were found in the graves of the royalty buried according to Indo-European rituals.

6. It is a widely accepted viewpoint that the walls of the grave chambers of the royalty were covered with valuable carpets and animal skins. In the royal graves at Nerkin Naver (2400–1800 BC) remains of the skins of bear, leopard, wolf and lion were revealed. Grave 7 (XIX–XVIII cc BC) stands out among others for its unique finds of 50 painted and richly decorated pots, most of them typical to the Armenian carpet-making art. On the bottom of one of the pots the imprint

of a carpet or some textile was clearly detected with the zigzag ornaments of the alteration of red, yellow, black and white colors (paints that are typical to the Armenian carpet-making art).

7. Lchashen wagons are also dated to the Late Bronze Age (XV–XIV cc BC); the ornaments on them represent claw-like crosses, running spirals and meanders which are peculiar to the carpet art, too.

8. The ornaments on the Armenian bronze belts of the early Iron Age (XII–IX cc BC) are closely connected with carpet ornaments. The mythological heroes and animals (unicorns, horses with claws and others) portrayed on the belts have great similarities to the ornaments of the decorated carpets. The tradition of enclosing the central descriptions in a surrounding belt is very common in carpet art as well.

9. In general, we can state, that similarities in ornamentation throughout the Early, Middle and Late, as well as Early Iron Ages in Armenia with the art of carpet-making are not accidental. It is logical to suppose that the decorations used in the Applied Arts in ancient cultures passed from generation to generation, and had their representation in the most stable and traditional sphere - carpet-weaving art.

Տեր Ասողիկ քահանա Կարապետյան, Աշխունջ Պողոսյան (Հայաստան)
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրարարուն, արխիվ, թանգարան,
ՀՀ Մշակույթի նախարարության «Մշակութային արժեքների
փորձագիտական կենտրոն»)

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԳՈՐԳԵՐԻ
ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Հայոց եկեղեցիների ներքին հարդարանքում և եկեղեցական արարողությունների ընթացքում ընդունված էր գորգեր ու այլ գործվածքներ օգտագործելու ավանդույթը: Դրանք հիմնականում ստացվում էին նվիրատվությունների միջոցով: Նկատի ունենալով գորգի նշանակությունը եկեղեցու հարդարանքում, հասկանալով նաև դրա արժեքն ու մշակութային բարձր վարկանիշը, հավատացյալները, ի շարս այլ առարկաների, եկեղեցիներին նվիրում էին նաև գորգեր ու կարպետներ: Այդ կերպ էլ կազմավորվում էին եկեղեցական հավաքածուները:

Բացի դրանցից, վանական խոշոր համալիրներում գոյություն ունեին հատուկ գործատներ, որոնց արտադրանքը նախատեսված էր ոչ միայն եկեղեցու ամենօրյա պահանջների բավարարման համար, այլև անհրաժեշտ դեպքերում դրանք նվիրաբերվում էին այս կամ այն անհատներին: Ամեն դեպքում նաև դրանցով էին կազմավորվում եկեղեցական առարկաների թանգարան-հավաքածուները: Պատմական Հայաստանի աշխարհաքաղաքական վայրիվերումների բերումով եկեղեցական հավաքածուները պարբերաբար թալանվել են կամ էլ հարկ է եղել դրանց մի մասի նվիրաբերման ճանապարհով եկեղեցիներն ազատել թալանից ու ավերումներից: Այս առումով կարելի է ենթադրել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայիս հավաքածուի ձևավորումը հիմնականում սկսվել է XIX դարի 30-ական թվականներից, երբ արևելյան Հայաստանում հաստատվեց խաղաղություն ու տարածաշրջանի տնտեսական ու հասարակական բնականոն զարգացումների համար ստեղծվեցին համեմատաբար նպաստավոր պայմաններ: Եղած տեղեկությունների համաձայն՝ նվիրատվություններից բացի, Մայր Աթոռի գորգերի հավաքածուում մեծ թիվ են կազմել նաև կանոնավոր գնումների միջոցով ձեռք բերված գորգերը: Հայտնի է օրինակ, որ 1873 թ. Արցախի թեմի առաջնորդ Սարգիս Ջալալյանի ծախսով տեղում գնվել և Էջմիածնի վանք է ուղարկվել երեսուն մեծ ու փոքր գորգ:¹ Այդ ավանդույթը շարունակվել է նաև հետագայում, իսկ վերջին տարիներին գնման միջոցով ձեռք բերվեց ու հավաքածուն հարստացավ պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող վեց գորգով:

Մայր Աթոռի գորգերի հավաքածուն պարունակում է պատմական Հայաստանի ու մերձակա տարածաշրջանների գորգագործական տարբեր կենտրոններին վերաբերող շուրջ հարյուր հիսուն գորգ և կարպետ: Պատմամշակութային նշանակության տեսանկյունից մեծ կարևորություն ունեն XVIII–XX դ. սկզբներին վերաբերող նմուշները, որոնցից մի քանիսը կա-

¹ **Ղուկաս Կարնեցի**, Բնագրեր. – Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա. 1780–1785, աշխատախրությամբ՝ Վարդան Գրիգորյանի, եր., 1984, էջ 30 (տեղեկությունը ներածական մասում է):

ընտր են հայոց գորգերի գեղագարդման ու իմաստային բովանդակության ոլորտների ուսումնասիրման համար:

Այստեղ պահվող XVIII դ. և XIX դ. առաջին կեսին վերաբերող գորգերը ուսումնասիրողների համար կարևոր սկզբնաղբյուր են հայոց գորգերի առանձին տիպերի ծագման ու դրանց տարածման արեալների բացահայտման հարցում: Ընդհանուր առմամբ, Մայր Աթոռի հավաքածուն ունի գիտամշակութային մեծ նշանակություն և դրա ամբողջական հրատարակումը լուրջ ներդրում կլինի տարածաշրջանի գորգագործական մշակույթի ուսումնասիրման ասպարեզում:

Reverend Father Asoghik Karapetyan, Ashkhunj Poghosyan (Armenia)

*(Museums and Archives of the Mother See of Holy Etchmiadzin,
“Cultural values Expertise centre” Ministry of Culture of RA)*

RUG COLLECTION OF THE MOTHER SEEOF HOLY ETCHMIADZIN

It was a common tradition to use rugs and other textiles in church inner decoration and ceremonies. Rugs were mainly obtained as donations. Being aware of the importance of rugs in church decoration and realizing their value and cultural hallmark, believers, among other things, donated rugs and carpets to the Armenian church; in this way collections of churches were compiled.

Furthermore, in big church complexes there were work houses which produced goods for everyday life of church as well as for donations on different occasions. The work houses contributed to the formation of church collections. Because of geographical and political unrest of Historical Armenia, church collections were systematically looted. In some cases there was necessity to donate part of church collections to avoid plundering and destruction. In this regard, it may be supposed that the present collection of the Mother See of Holy Etchmiadzin has been compiled since the 30s of 19th century, when peace was established in Eastern Armenia and there were more or less favorable conditions for economic and public natural development in the area. According to references, besides donated rugs, a great number of rugs in the collection were regularly purchased. It is known that in 1873, at the expenses of the Primate of the Artsakh Diocese SargisDjalalyan, 30 big and small rugs were bought there and sent to Etchmiadzin. That tradition has continued since that, and in recent years six rugs of great historical and cultural value have been purchased for the collection.

The collection comprises about 150 rugs and carpets of rug weaving centers of historical Armenia and neighboring areas. From the point of view of historical and cultural significance, samples dating to the 18th and early 20th centuries are of great importance, several of which are essential for the study of ornamentation and semantics of the Armenian rugs.

Rugs dating to the 18–19th centuries are an important source for professionals to identify the origin of different types of the Armenian rugs and their expansion areas. In general, the collection of the Holy See of Mother Etchmiadzin is of great scientific and cultural importance and its complete publication will be a serious contribution to the field of the rug weaving culture study of the area.

Հեսամ Քեչավարզ (Իրան)

(Թեհրանի Թարբիաթ Մոդարես համալսարան)

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ «ՔԱՇՔԱՅ» ԳՈՐԳԵՐԻ ԶԱՐԴԱՆԱԽՇՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը հնուց ի վեր հայտնի է եղել որպես բազմաթիվ արհեստների կենտրոն: Գորգագործության ավանդույթները Հայաստանում շատ հին արմատներ ունեն, որոնք հաստատվում են նաև հնագիտական պեղումների արդյունքներով: Մյուս կողմից, Իրանի Ֆարս նահանգում բնակվող քաշքայ ցեղերը նույնպես հայտնի են իրենց գորգերով, ինչպես նաև բրդե այլ գործվածքներով, և զարմանալիորեն, գորգերի զարդանախշերն այս երկու տարածաշրջաններում շատ նման են: Կարելի է բնորոշ նմանությունները դասակարգել երեք խմբի:

Առաջին խումբը ներառում է եզրագոտու զարդանախշերը: *Մոդախելը* եզրանախշ է, որը զուգակցում է ատամնավոր զարդանախշերը: Դա վերաբերում է գորգի հիմնական եզրագոտուն: Մոդախելը երբեմն վերաբերում է մեծ ու փոքր եզրանախշերին: Մյուս եզրանախշը *Ալաքորդն* է (երկգույն գայլ), որն օգտագործվում է հայկական գորգերի դաշտում, իսկ քաշքայներն ավելի հաճախ այն օգտագործում են եզրագոտիներում: Մեկը մյուսի մեջ տեղադրված ռոմբերը կոչվում են *Չափալը* և հաճախ կիրառվում են փոքր եզրագոտիներում: *Զանջիր-Մորդին* (շղթա-հավ) երկնախշ շարժուն փոքր եզրանախշ է, որը հայկական գորգերում ավելի շատ տերևի ձև ունի, իսկ քաշքայների գորգերում առանձին է ու ավելի վերացական: Վերջին ընդհանուր եզրանախշը *Դուսթ-Քոմին* է, որը բաղկացած է երկու տերևից ու կենտրոնական մեկ ծաղիկից: Այս եզրանախշը Հայաստանում ավելի կոր ու բնական գծերով է, իսկ քաշքայ վարպետների գորգերում զարդանախշն ավելի բազմանկյուն է ու վերացական բնույթ ունի:

Երկրորդ ընդհանրությունը դաշտի զարդանախշն է: Ընդհանուր ամենահայտնի զարդանախշերից մեկը *Մորդի-Գոչաքին* է (հավ-խոյ), որը տարբեր շրջաններում հայտնի է տարբեր անուններով՝ խեցգետին, հավ և այլն: Մորդի-Գոչաքին երկու տարածաշրջաններում հաճախ օգտագործվում է որպես գորգերի մեդալիոն կամ շրջանակ: *Շանեն* (սանր) դաշտի մեկ այլ զարդանախշ է, որը քաշքայների գորգերում ունի երկու ատամ, երբեմն՝ մեկ և հաճախ հանդես է գալիս ուրիշ զարդանախշերի հետ: Հայ վարպետները Շանեն օգտագործել են և քաշքայների գորգերին բնորոշ ձևով, և շերտավոր դաշտերում: Մարդակերպ ու կենդանակերպ զարդանախշերը, որոնք վերաբերում են նույն խմբին, Հայաստանում ավելի բնականին մոտիկ են պատկերված:

Վերջին խմբի մեջ մտնում են հատուկ զարդանախշեր, ինչպիսիք են՝ նշան զարդանախշերը, քառորդ մեդալիոններով շրջապատված կենտրոնական մեդալիոնով հորինվածքը, շերտավոր հորինվածքը: Հայկական ու քաշքայների գորգերում ամենատարածված նշան զարդանախշը՝ արծիվ-նուշը, հայկական գորգերի վրա ավելի կորավուն է, իսկ քաշքայների գորգերի վրա՝ կատարյալ երկրաչափական ձև ունի:

Ջարդանախշերի նմանություններից կարելի է ենթադրել, որ այս գորգերն ընդհանուր ծագում ունեն:

Hesam Keshavarz (Iran)
(Tarbiat Modares University of Tehran)

THE COMPARATIVE STUDY BETWEEN THE MOTIFS OF THE ARMENIAN CARPETS AND THE QASHQAI CARPETS

